Մելիք Հովսեփյան

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ (1964-1985 թթ.)

Բանալի բառեր. Կոմիտե, սփյուռքահայություն, լիբանանահայ համայնք, օգնություն, կապեր, փոխայցեր, ուսում, հանգիստ, բուժում, գործընկեր:

ՄՈՒՏՔ. ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1964-1985 ԹԹ.

Կոմիտեի գործունեության տարիները համընկան Լիբանանում երկարամյա քաղաքացիական պատերազմի հետ (1975-1990 թթ.), որի պայմաններում այդ երկրի հայաշատ համայնքը ենթարկվում էր ծանր ցնցումների: Նախկինում խոսել ենք Մերձավոր Արևելքում Կոմիտեի գործունեության կազմակերպական, գաղափարաբանական, համայնքում տիրող իրավիճակից բխող և տարածաշրջանային-քաղաքական լարված իրադրությունից առաջացած խնդիրների մասին[1]: Նման խնդիրներն առնչվում էին Կոմիտեի իրավասություններին, համայնքներում նրա գործունեության սահմանափակումներին, այդ գործունեության քաղաքական առաջնահերթություններին, ինչպես նաև տարածաշրջանում ժամանակ առ ժամանակ բռնկվող պատերազմներին: Նշվածի համատեքստում Լիբանանի հայ համայնքը բացառություն չէր, ավելին, հենց նա էր նշված խնդիրներից առաջացած հետևանքներին ամբողջապես և ուղղակի առերեսվողը:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆ ԸՍՏ ԿՈՄԻՏԵԻ ՓՈՍՏԱԹՂԹԵՐԻ

Ըստ խորհրդային տեղեկանքների՝ Լիբանանում հայերի թիվը շուրջ 180 հազար էր, որից հայ լուսավորչականներ՝ 140 հազար, հայ կաթոլիկներ՝ 30 հազար և հայ բողոքականներ (ավետարանականներ)՝ 10 հազար: Նշվում էր նաև, որ Լիբանանում կային նաև ոչ քաղաքացի հայեր՝ շուրջ 60 հազար: Ընդհանուր առմամբ, հայերի թիվը Լիբանանում 1958-1965 թթ. միջակայքում 220-250 հազար էր[2]: 1983 թ. ևս, ըստ Կոմիտեի տվյալների, հայերի թիվը Լիբանանում գրեթե 250 հազար էր[3]: Ակնհայտ է, որ 1964-1985 թթ. Լիբանանում բնակվում էր ավելի քան 200 հազար հայ, բայց այդ թիվը մեծապես կրճատվեց քաղաքացիական պատերազմի պատճառով:

Ինչպես և մյուս երկրներում, Լիբանանում ևս հայկական հասարակական-քաղաքական հոսանքները բաժանվում էին «հայրենասիրականների» կամ «առաջադիմականների» (ՍԴՀԿ, ՌԱԿ, ՀԲԸՄ) և «հետադիմականների» (ՀՅԴ և համակիր շրջանակներ): Հետևաբար քննարկվող տեղեկանքներում զգացվում է այլ, հատկապես մշակութային կազմակերպությունների վերաբերյալ տեղեկությունների կարևորումը:

1965 թ. դրությամբ Լիբանանահայ համայնքում Կոմիտեի գործընկերների մեջ ամենաակտիվներից մեկը «Թեքեյան» մշակութային միությունն էր, որ Լիբանանի հայկական մշակութային ամենաբազմամարդ կազմակերպություններից մեկն էր: Այն հիմնադրվել էր 1947 թ. և, ունենալով նյութական ապահովված վիճակ, կազմակերպում էր երաժշտական երեկույթներ, ներկայացումներ, խրախուսում ու աջակցում էր երիտասարդ ստեղծագործողներին: Միությունը լայն աշխատանք էր կատարում լիբանանահայ երիտասարդության ներկայացուցիչներին Խորհրդային Հայաստանի հետ կապելու և Սփյուռքում հայոց լեզուն և հայ մշակույթը պահպաններու ուղղությամբ: Այն ուներ իր

[1] Տե՛ս Հովսեփյան Մ., Մերձավոր Արևելքում Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության որոշ խնդիրների շուրջ (1964-1985 թթ.), «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2017, էջ 224-229:
[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, g. 16, գ. 192, թ. 2-3:
[3] Տե՛ս նույն տեղում, g. 14, գ. 47, թ. 2:

մասնաշենքը, որտեղ գտնվում էին ակումբ և ՌԱԿ-ի «Զարթոնք» պարբերականը: Միության հովանավորությամբ Բեյրութում գործում էր նաև առանձին դպրոց:

Լիբանանում գործում էր նաև «Վերծնունդ» մշակութային միությունը, որը ղեկավարում էին անկուսակցական հայեր: Նրանք բարեկամաբար էին տրամադրված Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Միությունը կազմակերպում էր մշակութային միջոցառումներ, ինչպես նաև մասնակցում լիբանանահայ համայնքում այլ «առաջադիմական / հայրենասիրական» կազմակերպությունների կողմից անցկացվող միջոցառումներին:

Լիբանանահայ Գրական շրջանակը Լիբանանի հայ երիտասարդ շնորհալի գրողների և արվեստագետների կազմակերպությունն էր, որի կորիզն էին կազմում աչքի ընկնող մի շարք գրողներ: Գրական շրջանակը կազմակերպում էր գեղարվեստական երեկոներ, դասախոսություններ, բանավեճեր, սփյուռքահայ և խորհրդահայ գրողների ստեղծագործությունների քննարկումներ:

Լիբանանի «Նոր սերունդ» մշակութային միության գրական խմբակը միավորում էր հնչակյան գրական երիտասարդությանը և հրատարակում «Արարատ» գրական ամսաթերթը: Վերջինս Գրական շրջանակի հետ միասին կազմակերպում նաև էին համատեղ երեկոներ ու հանդեսներ[1]:

Կոմիտեի ստեղծման շրջանում Լիբանանում կար մի քանի տասնյակ հայկական դպրոց 14340 աշակերտներով[2]:

Համայնքում գործող արվեստագետների թիվը շուրջ 80 էր:

Այնտեղ հրատարակվում էին «Արարատ» (ՍԴՀԿ), «Զարթոնք» (ՌԱԿ) և «Ազդակ» (ՀՅԴ) պարբերականները: Շաբաթաթերթերթերից կարևոր էին «Կանչ» (հայ կոմունիստներ), «Նաիրի» (գրական-քաղաքական), «Սփյուռք» (գրական-քաղաքական), «Մասիս» (կաթոլիկ համայնք) և «Երիտասարդ հայ» (անհատական) շաբաթաթերթերը, «Բագին» (ՀՅԴ), «Բժիշկ» (Լիբանանահայ բժշկական միություն), «Հասկ» (Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն), «Զանասեր» (ՀԲԸՄ) և «Շիրակ» (Թեքեյան մշակութային միություն) ամսագրերը: Լիբանանում 1960-ական թթ. երկրորդ կեսին գործում էր 55 հայկական դպրոց, որոնցից կաթոլիկ համայնքի հովանու ներքո՝ 9, բողոքական համայնքի հովանու ներքո՝ 12, անհատական՝ 5, իսկ մնացածները գործում էին հայ առաքելական համայնքի հովանավորությամբ[3]:

Նոր իրավիճակը լիբանանահայ համայնքում: 1980 թ. մի տեղեկանքում (հեղինակներ Լ. Մանասերյան[4], Մ. Յուզբաշյան[5], Վ. Համազասպյան[6]) խոսվում է այն մասին, որ Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքում հայկական կուսակցությունների միջև ձևավորվեց միասնական ճակատ: ՀՅԴ-ի հեղինակությունը բարձրացել էր այն պատճառով, որ նրա զինված մարտիկները քաղաքացիական պատերազմի ընթացքում հիմնականում իրենց վրա էին վերցրել հայ խաղաղ բնակչության պաշտպանությունը: Արդյունքում ՍԴՀԿ տեղական կառույցը սկսեց ՀՅԴ-ի հետ մերձեցման հակումներ ցուցաբերել: Ի վերջո նույնիսկ նախատեսվեց ստորագրել «Համատեղ գործողությունների համաձայնագիր»: Հնչակյաններն արդեն տեղի են տվել ՀՅԴ-ի հեղինակության առաջ, իսկ ռամկավարները համաձայն չեն որևէ միության մաս կազմելու, եթե այնտեղ դաշնակցականները կարող են գլխավոր դեր ստանալ[7]:

Քննարկելով լիբանանահայ համայնքում ստեղծված վիճակը՝ տեղեկանքի հեղինակները «Ազգային ճակատ»-ի ստեղծումը խորհրդահայ ղեկավարության համար հա-

---

[1] Տե՛ս նույն տեղում, g. 1, գ. 41, թ. 30-31:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 37:

[3] Տե՛ս նույն տեղում, g. 16, գ. 192, թ. 5-6:

[4] Խորհրդահայ հասարակական-քաղաքական գործիչ, խնդրո առարկա շրջանում՝ Հայաստանի կոմկուսի կենտկոմի ինֆորմացիայի և արտասահմանյան կապերի բաժնի վարիչ:

[5] 1978-1988 թթ. ՀԽՍՀ պետական անվտանգության կոմիտեի նախագահ:

[6] 1964-1985 թթ. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ:

[7] Տե՛ս «Հայրենիք-սփյուռք. կամրջող անուն՝ Վ. Համազասպյան», կազմ. Ս. Միրզոյան և Մ. Մարտիրոսյան, Ե., 2011, էջ 257-258: Զեկուցագիրը վերահրատարակվել է նաև հետագայում: Տե՛ս «Սփիւռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ (1945-1991, ընտրանի)», կազմեց Գ. Յազըճեան, Ե., 2016, էջ 182-185:

մարում էին անընդունելի և հետապնդած շահերի տեսանկյունից՝ բացասական հետևանքներով լի: Նրանք առաջարկում էին հնչակյաններին համոզել, թե ՀՅԴ-ի հետ մերձեցումը նրանց հեղինակությանը հարված կհասցնի, և հեռու պահել նրանց համաձայնագիր կնքելու մտքից: Միաժամանակ նրանք համոզված էին, որ հարկ է ՌԱԿ-ին և ՍԴՀԿ-ին պահել իրենց ազդեցության տակ՝ նաև հաշվի առնելով արևմտյան ուժերի (հատկապես ԱՄՆ-ի) հետևողական աշխատանքն այդ կուսակցությունների հետ:

Կարևոր է նշել նաև, որ տեղեկանքի հեղինակները բացի միջկուսակցական հարաբերություններում ազդեցություն գործելու ցանկությունից, կամենում էին միջամտել նաև ներկուսակցական հարաբերություններին՝ օգտագործելով կուսակցական գործիչներին: Մասնավորապես ՌԱԿ-ի պարագայում նրանք առաջարկում էին հաշվի առնել մրցակցությունը կուսակցության ղեկավար գործիչներ Գերսամ Ահարոնյան-Բարունակ Թովմասյան զույգի և Հայկաշեն Ուզունյանի միջև՝ աջակցելով երկրորդին, քանի որ նա բարեկամաբար էր տրամադրված Խորհրդային Հայաստանի նկատմամբ՝ միաժամանակ հեղինակություն վայելելով ամերիկամետ շրջանակներում: Հավանաբար նման կերպ վարվում էին նաև ՍԴՀԿ-ի ղեկավարների հետ հարաբերություններում, որովհետև առաջարկվում էր նաև չեղյալ անել հնչակյան և ռամկավար խորհրդայնամետ գործիչների նախատեսված այցը Խորհրդային Հայաստան, քանի որ այդ կուսակցությունների գալիք համագումարների շեմին նման այցը կարող էր ներկուսակցական ընդդիմությունների կողմից շահարկվել ընդդեմ նշված գործիչների:

Ելնելով փաստաթղթի բովանդակությունից՝ կարելի նշել, որ սփյուռքահայ կազմակերպությունների նկատմամբ մոտեցումներում տեղի էր ունեցել մեծ փոփոխություն, քանի որ խորհրդային ազդեցությունը լիբանանահայ համայնքում և Լիբանանում ընդհանրապես հաստատելու ուղղությամբ նպատակահարմար էր դիտվում բարելավել հարաբերությունները նաև ՀՅԴ-ի հետ՝ հիմք ընդունելով Լիբանանի կոմունիստական կուսակցության և ԽՍՀՄ դեսպանության առաջարկությունը: Բայց հարաբերությունների բարելավումը չէր նշանակում աջակցել լիբանանահայ կուսակցությունների համաձայնությանը, հակառակը, դա պետք էր անել ՍԴՀԿ-ՌԱԿ խորհրդայնամետ միության ստեղծմամբ և ՀՅԴ-ի՝ ԽՍՀՄ-ի նկատմամբ բարեկամաբար տրամադրված գործիչների հետ աշխատելու ճանապարհով:

Վերջնական կողմնորոշման համար անհրաժեշտ էր դիտվում երկու շաբաթով Բեյրութ գործուղել Կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանին[1]:

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կոմիտեի ստեղծումը լայն արձագանք գտավ լիբանանահայության շրջանում: Լիբանանահայ «առաջադիմական» շրջանակները Կոմիտեի ստեղծումը համարում էին սփյուռքահայության նկատմամբ խորհրդահայ իշխանությունների հոգատարության նշան: Իսկ Կոմիտեի հիմնական առաքելությունը նրանք տեսնում էին հայապահպանության ասպարեզում[2]: Կոմիտեն նույնիսկ համարվում էր «անպաշտօն նախարարութիւն»[3]: Նրա ստեղծման կապակցությամբ շրջանառվում էր այն միտքը որ սփյուռքն ամբողջությամբ հույսը դնում է մայր հայրենիքի վրա[4]: 1970 թ. Բեյրութի «Խոսնակ» թերթը գրում էր, որ հայրենիքը բոլոր միջոցներով (ռադիո, մամուլ, գիրք, մշակութային կապեր, փոխայցելություններ) աջակցում է սփյուռքի լինելիության պայքարին[5]:

Տեղի կազմակերպություններն անմիջապես սկսեցին բոլոր հարցերով դիմել Կոմիտեի ղեկավարությանը՝ ներկայացնելով նաև սեփական գործունեության մասին տեղեկություններ[6]: Մուսալեռցիների հայրենակցական միությունը նույնիսկ դիմել էր Կոմիտե-

---

[1] Տե՛ս «Հայրենիք-սփյուռք. կամրջող անուն՝ Վ. Համազասպյան», էջ 258-260:
[2] Տե՛ս «Զարթօնք», Բեյրութ, 10.09.1964:
[3] Տե՛ս նույն տեղում, 11.09.1964:
[4] Տե՛ս «Արարատ», Բեյրութ, 23.02.1966:
[5] Տե՛ս «Խօսնակ», պաշտօնաթերթ Հ.Բ.Ը. միութեան, 1970, թիվ 4, էջ 121:
[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, g. 2, գ. 291, թ. 5 (Սսեցի երիտասարդների միության 14.08.1964 թ. գրությունը), նույն տեղում, թ. 1-2 (Հայագիտական ուսմանց Երուանդ Հիւսիսեան հիմնարկի գրությունը 24.08.1964 թ.) և

ին՝ աջակցելու ՀԽՍՀ-ում մի բնակավայր «Նոր Մուսա լեռ» անվանակոչելուն աջակցելու խնդրանքով: Նրանք հույս ունեին, որ այդ անվանակոչումը տեղի կունենա 1965 թ., երբ լրանում էր Մուսա լեռան հերոսամարտի 50-ամյակը[1]: Արդեն 1967 թ. հայրենակցական միությունն առաջարկում էր Մուսալեռ ավանում կառուցել 1915 թ. հերոսամարտը հավերժացնող հուշարձան միության միջոցներով[2]: Հուշարձանը Մուսալեռ ավանում կառուցվեց 1976 թ.: Նմանապես 1969 թ. Ուրֆայի հայրենակցական միությունն առաջարկում էր հայրենիքում Ուրֆայի անունով մի պողոտա, արվարձան կամ թաղամաս անվանակոչել[3]: Ի պատասխան 1978 թ. Աշտարակի շրջանի 4-րդ սովխոզը կոչվեց Նոր Եդեսիա[4]:

Իսկ Թեքեյան մշակութային միությունը Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցի միջոցառումներին մասնակցելու նպատակով Լիբանան էր հրավիրում Վ. Համազասպյանին, ՀԽՍՀ ԳԱ նախագահ Վիկտոր Համբարձումյանին և երգչուհի Զարուհի Դոլուխանյանին[5]:

Կոմիտեի հետ 1965 թ. գրական թեմայով կապ մեջ է եղել նաև ՀՅԴ-ի հայտնի գործիչ Կ. Սասունին[6]: Թեքեյան մշակութային միության ղեկավարությունը Կոմիտեից աջակցություն էր ակնկալում հիմնական խնդրի լուծման առումով. «Մեր դիմակայեած գլխաւոր դժուարութիւնը հասարակական-ազգային գործիչներու եւ որակաւոր ուսուցիչներու պակասն է: Ազգային կալուածը հետզհետէ անհրապոյր դառնալու վրայ է, եւ դժուար է այս մարզերուն համար ղեկավարներ պատրաստելը: ...Կոմիտէն կարող է մեզի եւ ամբողջ սփիւռքահայութեան օգնել վերոյիշեալ պակասներու լրացումով, եթէ հնարաւոր ըլլայ, մշակութային ու մարզական կապերու սերտացումով եւ գրականութիւն հայթայթելով»[7]:

Փոխայցեր: Փոխադարձ այցելությունները, որոնք Կոմիտեի աշխատանքներում մեծ տեղ էին զբաղեցնում, Լիբանանի դեպքում հաճախ կախված էին երկրի ներքաղաքական զարգացումներից: Կոմիտեի ստեղծումից անմիջապես հետո՝ 1965 թ., Լիբանան և Եգիպտոս են ուղարկվել Հայաստանի արվեստի շրջիկ ցուցահանդեսներ: Նույն ժամանակ Բեյրութում կազմակերպվել են հայկական կինոնկարների փառատոն և հայ գրքի ցուցահանդես: Այդ առիթով ուղարկվել են գրողներ, կինոգործիչներ, դերասաններ[8]:

1965 թ. Խորհրդային Հայաստան այցելեցին լիբանանահայ «առաջադիմական» մամուլի ներկայացուցիչները[9]:

1967 թ. սկզբին Լիբանանահայ գրական շրջանակը գրում էր Վ. Համազասյանին՝ Մովսես Խորենացու ծննդյան 1500-ամյակի տոնակատարության առթիվ գործուղել Պարույր Սևակին կամ Գևորգ Էմինին՝ բանախոսության համար, ինչպես նաև «Կոմիտաս» խումբը՝ շրջագայության նպատակով, շուրջ 10 հոգուց բաղկացած արվեստագետների խումբը՝ ելույթներ ունենալու համար (նախընտրելի էին համարվում մնջախաղի վարպետ Լ. Ենգիբարյանը և երգչուհի Լ. Զաքարյանը)՝ Կոմիտեի ներկայացուցչի ուղեկցությամբ[10]: Չնայած Վ. Համազասյանը խոստանում էր, որ այցը կկայանա, բայց այն հետաձգվում էր, ուստի նրանք Պարույր Սևակին մեկ անգամ ևս հրավիրեցին նույն տարվա վերջին: 1968 թ. գրական շրջանակը Բեյրութ էր հրավիրում Վահագն Դավթ-

---

այլն: Այդ բնույթի գրությունները տե՛ս «Լիբանանահայ համայնքը 1915-1990 թվականներին», ըստ արխիվային փաստաթղթերի, խմբ. Ա. Վիրաբյան, Ե., 2017, էջ 141-151, 182-184 և այլն:

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 545, թ. 10:

[2] Տե՛ս նույն տեղում, թ. 26:

[3] Տե՛ս նույն տեղում, գ. 571, թ. 25-26:

[4] Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 233, թ. 16:

[5] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 240, թ. 5-6:

[6] Տե՛ս նույն տեղում, գ. 291, թ. 15-16:

[7] Նույն տեղում, թ. 16:

[8] Տե՛ս նույն տեղում, ց. 4, գ. 4, թ. 5:

[9] Տե՛ս նույն տեղում, ց. 16, գ. 173, թ. 4:

[10] Տե՛ս նույն տեղում, գ. 558, թ. 1-2:

յանին՝ Հ. Թումանյանի ծննդյան 100-ամյակի տոնակատարությունների շրջանակներում[1]:

Կոմիտեի հետ համագործակցում էին նաև լիբանանահայ մշակութային խմբերը՝ հայրենիքում հյուրախաղերով հանդես գալու համար: Մասնավորապես 1968 թ. նման պայմանավորվածություն ձեռք բերվեց մի կողմից «Նոր սերունդ» մշակութային միության, «Լիբանանահայ մշակութային միության» և Գրական շրջանակի, իսկ մյուս կողմից Կոմիտեի միջև: Ի վերջո նրանց այցը հնարավոր չեղավ իրականացնել ծրագրերի փոփոխության պատճառով[2]:

1970 թ. դեկտեմբերի 21-ից մինչև 1971 թ. հունվարի 22-ը Լիբանանում էր Վ. Համազասպյանը: Նրան միացյալ հրավիրել էին Լիբանանահայ գրական շրջանակը, «Նոր սերունդ» մշակութային միությունը և Թեքեյան մշակութային միությունը՝ Խորհրդային Հայաստանի 50-ամյակի տոնակատարությանը մասնակցելու[3]:

1971 թ. հունվարին Հայկազյան քոլեջը դիմեց Կոմիտեին՝ 1971-1972 տարեշրջանում համար հայագիտության ամբիոն գործուղել հայոց լեզվի ու գրաբարի մասնագետ: Նրանք առաջարկում էին գործուղել է. Աղայանին[4]:

1971 թ. Վ. Համազասպյանին է դիմում Հայ մարմնակրթական միության Բեյրութի շրջանի վարչությունը՝ միության 50-ամյակի առիթով Բեյրութ գործուղելու պաշտոնական ներկայացուցիչներ Խորհրդային Հայաստանից, ինչպես նաև մարզական, երիտասարդական և արվեստագետների պատվիրակություններով: Ի պատասխան Կոմիտեի նախագահի տեղակալը խոստանում էր հաշվի առնել հրավերը, բայց նաև առաջարկում հրավիրել Երևանի «Արարատ» ֆուտբոլային թիմին, որը նոյեմբերին մեկնելու էր Սիրիա[5]:

Խնդիրներից շատերը սակայն իսկույն լուծում չէին գտնում: Մասնավորապես Երվանդ Հյուսիսյան հայագիտական հիմնարկի 1964 թ. խնդրանքը՝ հիմնարկ գործուղելու հայագետ դասախոս գործուղելու վերաբերյալ[6] լուծում չէր գտել և 1971 թ. հիմնարկից դարձյալ գրում էին Կոմիտեի նախագահին այդ մասին: Նրանք առաջարկում էին միջանկյալ լուծում. քանի որ 1971-1972 տարեշրջանում դասավանդելու նպատակով Հայկազյան քոլեջ էր գործուղվելու է. Աղայանը, կարելի էր քոլեջի տնօրինությանը զգուշացնել, որ նա շաբաթը 3 ժամ պետք է դասախոսի նաև Հայագիտական հիմնարկում: Ի պատասխան Վ. Համազասպյանը գրում էր, որ քոլեջի դասախոսի հարցը լուծելիս հաշվի կառնվի նրանց առաջարկը[7]: Ի վերջո խնդիրը չլուծվեց:

1972 թ. Կոմիտեն հյուրընկալել է մշակութային միությունների ներկայացուցիչների: Կոմիտեն ընդունել է նաև Լիբանանի «Հայ ասպետներ»-ի «Յուլղարցիների հայրենակցական միության», «Մուսալեռցիների հայրենակցական միության» և Թուրքիայից, Իրաքից, Սիրիայից ժամանած հայ տուրիստական բազմաթիվ խմբերի[8]: Փոխադարձաբար «Լիբանանի գրական շրջանակի» կողմից կազմակերպված հայկական ֆիլմերի փառատոնին մասնակցելու համար 1972 թ. փետրվարի 26-ից Լիբանան է մեկնել ՀՍՍՀ կինոմատոգրաֆիայի պետական կոմիտեի նախագահ Գևորգ Հայրյանը, ռեժիսոր Հենրիկ Մալյանը և դերասան Սոս Սարգսյանը: Փառատոնի ընթացքում ցուցադրվել է 8 գեղարվեստական, 9 վավերագրական և 4 մուլտիպլիկացիոն հայկական կինոնկարներ: 1972 թ. Հայաստանի թատերական ընկերության մասնագիտացված խումբը մեկնել է Լիբանան և բազմաթիվ հանդիպումներ ունեցել հայ համայնքի տարբեր շրջանակների հետ[9]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 3-14:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 11-12:
[3] Տե՛ս «Լիբանանահայ համայնքը 1915-1990 թվականներին», ըստ արխիվային փաստաթղթերի, էջ 448, ծանո թ. 402:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, g. 4, գ. 313, թ. 21:
[5] Տե՛ս նույն տեղում, գ. 316, թ. 16-17:
[6] Տե՛ս նույն տեղում, g. 2, գ. 291, թ. 1-2:
[7] Տե՛ս նույն տեղում, g. 4, գ. 316, թ. 49-50:
[8] Տե՛ս նույն տեղում, g. 6, գ. 3, թ. 5-7:
[9] Տե՛ս նույն տեղում, թ. 17-19:

Գրական շրջանակի հրավերով այդ տարի Բեյրութ է մեկնել Կոմիտեի մամուլի բաժնի աշխատակից, բանաստեղծ Ռ. Դավոյանը: Նրա ստեղծագործությանը նվիրված երեկոյին ներկա են եղել տարբեր շրջանակների շուրջ 50 ներկայացուցիչներ[1]:

Կոմիտեն լիբանանահայ համայնքի հետ կապերի ամրապնդման նպատակով խրախուսում և ներկայացնում էր համայնքի մշակութային գործիչների ստեղծագործությունները Երևանում: Այդպես 1973 թ. կազմակերպվեց լիբանանահայ նկարիչ Ա. Դարբինյանի գործերի ցուցահանդեսը[2]:

Կոմիտեն 1975 թ. ակտիվորեն զբաղվեց նաև Բեյրութի «ՀՄՄ-Մասիս» երիտասարդական կազմակերպության հրավերով Երևանի ֆուտբոլի մասնագիտացված դպրոցի պատանեկան թիմը (20-22 հոգի) Բեյրութ գործուղելու աշխատանքով[3]: Ի պատասխան Կոմիտեն նույն թվականին հայրենիք հրավիրեց Լիբանանի «Արարատ» և «Էրեբունի» ակումբների ֆուտբոլի պատանեկան թիմերին: «Ելնելով բարեկամ կազմակերպությունների գործունեության խրախուսման և պրոպագանդման նկատառումներից, Կոմիտեն ծրագրել է ընթացիկ տարում 10 օրով Հայրենիք հրավիրել «Արարատ» և «Էրեբունի» թիմերի 20 հոգուց բաղկացած մարզական պատվիրակություն»[4]:

1975 թ. ապրիլից շուրջ մեկուկես տարի Լիբանանում մեծ չափով սրվեց քաղաքացիական պատերազմը, որի հետևանքով Կոմիտեի աշխատանքները շատ ուղղություններով խափանվեցին: Համայնքային կյանքը գրեթե ամբողջովին կանգ առավ: Վ. Համազասպյանը ՀԿԿ կենտրոնական կոմիտեին տեղեկացնում էր, որ շուրջ 250 հազարանոց լիբանանահայ համայնքը ծանր վիճակում է և օգնություն է ստանում բոլոր կողմերից: Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն իր միջոցներից աղետյալ համայնքին հատկացրել է 20 հազար դոլար և կոչ արել բոլոր համայնքներին՝ աջակցելու լիբանանահայ կարիքավոր ընտանիքներին[5]: Կոմիտեն առաջարկում էր Կարմիր խաչի միջոցով օգնություն տրամադրել Լիբանանի ժողովրդից, որց բաժին կհասնի նաև հայացքը հայրենիքին հառած լիբանանահայությանը: Կոմիտեն առաջարկում էր նաև թույլատրել իր միջոցներից և իր տնօրինության տակ դրված կտակներից բաժին հանել լիբանանահայերին: Մյուս կողմից անհրաժեշտ էր դիտվում հայրենիք բերել լիբանանահայ երեխաների: Ի միջի այլոց դա բարձրացնելու էր Խորհրդային Հայաստանի հեղինակությունը սփյուռքահայության աչքում[6]:

Սակայն նույնիսկ այդ վիճակում փոխայցելությունները շարունակվում էին: Համապատասխանաբար 1976 թ. և 1978 թ. ՀԽՍՀ են այցելել Լիբանանի Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներ Հ. Մադեյանը և Գ. Ադդարյանը[7]:

1977 թ. Թեքեյան մշակութային միությունը Վ. Թեքեյանի ծննդյան 100-այակի առիթով հայրենիքից հյուրեր էր հրավիրում, որոնց թվում՝ Կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը[8]: Վերջինս սակայն Լիբանան մեկնեց 1978 թ.՝ քաղաքացիական պատերազմի վնասներին տեղում ծանոթանալու նպատակով[9]:

1979 թ. Սիրիայից և Լիբանանից Խորհրդային Հայաստան է հրավիրվել 10 հոգանոց աշխատավորական պատվիրակություն: Իսկ սեպտեմբեր-հոկտեմբերին հրավիրել են «առաջադիմական» թերթերի խմբագիրների և նշանավոր լրագրողների: Հրավիրել են նաև կանանց, երիտասարդների և գիտության ներկայացուցիչների[10]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, ց. 6, գ. 3, թ. 7:
[2] Տե՛ս նույն տեղում, ց. 5, գ. 17, թ. 12:
[3] Տե՛ս նույն տեղում, ց. 6, գ. 12, թ. 7:
[4] Նույն տեղում, թ. 8:
[5] «Հայոց Հայրապետի հայրական կոչը Լիբանանի կարիքավոր հայ ընտանիքներին օգնելու համար», «Էջմիածին», պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1975, թիվ 11, էջ 8-10:
[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 6, գ. 23, թ. 1-2:
[7] Տե՛ս նույն տեղում, ց. 14, գ. 30, թ. 3:
[8] Տե՛ս նույն տեղում, ց. 8, գ. 153, թ. 44-45:
[9] Տե՛ս նույն տեղում, գ. 26, թ. 5:
[10] Տե՛ս նույն տեղում, գ. 157, թ. 1:

1980 թ. Կոմիտեի խողովակով Երևան ժամանեց Բեյրութի Հայկազյան քոլեջի պատվիրակությունը[1]:

Խորհրդային Հայաստանի ստեղծման 60-ամյակի տոնակատարությանը Բեյրութում մասնակցելու համար Կոմիտեն Լիբանան գործուղեց արվեստագետների խումբ՝ Կոմիտեի նախագահի տեղակալ Վահագն Դավթյանի գլխավորությամբ: Խմբի մեջ մտնում էին երգչուհի Բելլա Դարբինյանը և դուդուկահար Ձիվան Գասպարյանը[2]: Միևնույն ժամանակ Լիբանան հրավիրվեց գրող Սերո Խանզադյանը[3]:

Բեյրութի «Թեքեյան» մշակութային միության ատենադպիրը մասնակցեց 1981 թ. Երևանում կայացած սփյուռքահայ մամուլի ներկայացուցիչների և թերթերի ու ամսագրերի խմբագիրների սեմինար-խորհրդակցությանը, իսկ հոկտեմբերին Երևան այցելեցին մշակութային միության ղեկավարները[4]: 1981 թ. մայիսմեկյան միջոցառումներին մասնակցելու համար հայրենիք հրավիրվեց 7 հոգանոց պատվիրակություն Սիրիայից և Լիբանանից: Նույն թվականին Կոմիտեն գործնական օգնություն է ցույց տվել լիբանանահայ գործիչ Հովհաննես Ձերեջյանին (Շիրազ), որը ՀԽՍՀ էր ժամանել «Վերածնված Հայաստան» խորագրով վավերագրական կինոնկար ստեղծելու նպատակով[5]:

Փոխայցերի շրջանակներում պատվիրակությունների կազմում հաճախ էին ընդգրկվում Կոմիտեի ներկայացուցիչներ: 1982 թ. Կոմիտեի գծով Մերձավոր Արևելքի երկրներ մեկնող տուրիստական խմբի կազմում ընդգրկվեց Կոմիտեի 4 աշխատակից[6]:

1984 թ. Լիբանանի հայ համայնքից երկու փուլով ՀԽՍՀ են հրավիրվել 8 հոգի՝ հայրենի երկրի ձեռքբերումներին ծանոթացնելու համար[7]: Նույն թվականի մայիսմեկյան տոնակատարություններին մասնակցելու համար հրավիրվել է 3 հոգի: Այնուհետև Լիբանան է գործուղվել Կոմիտեի մեկ աշխատակից[8]:

Կոմիտեն նաև հոգ էր տանում, որ հայրենիքում բուժում ստանան քաղաքացիական պատերազմից տուժածները: 1977 թ. Լիբանանից ժամանած 30 հասարակական գործիչներ բուժում են ստացել ՀԽՍՀ բուժիմնարկներում[9]: 1979 թ. ՀԽՍՀ-ում բուժման կուրս են ստացել ևս 40 լիբանանահայեր[10]: 1981 թ. Լիբանանից բուժման նպատակով հրավիրվել է 10 հոգի[11]:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՔՈՒՄՆԵՐ

Կոմիտեն իր գոյության առաջին իսկ տարում՝ 1964 թ. Երվանդ Հյուսիսյանի հայագիտական ուսմանց հաստատությանն է ուղարկել շուրջ 500 կտոր արժեքավոր հայագիտական գրականություն, ինչպես նաև բազմաթիվ թերթեր ու ամսագրեր[12]:

Լիբանանահայ «առաջադիմական» դպրոցներն իրենց բաժինը ստացան 1965 թ. Մերձավոր Արևելք ուղարկված 11 լրակազմ (կոմպլեկտ) ֆիզիկայի լաբորատորիաներից[13]:

Երկար տարիներ շարունակ լիբանանահայությունը ծանր կորուստներ էր կրում քաղաքացիական պատերազմից: Այդ իսկ պատճառով լիբանանահայությանն օգնության տրամադրման աշխատանքների կազմակերպումը ստանձնում է Կոմիտեն: 1977 թ. նոյեմբերին Վ. Համազասպյանը գրում էր ՀԽՍՀ մինիստրների խորհրդին՝ լիբանանահայության համար նախատեսված օգնությունն առաքելու խնդրանքով: Վերջինիս

---

[1] Տե՛ս նույն տեղում, g. 14, գ. 233, թ. 4:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 35:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 44:
[4] Տե՛ս նույն տեղում, գ. 14, թ. 23:
[5] Տե՛ս նույն տեղում, թ. 34:
[6] Տե՛ս նույն տեղում, գ. 55, թ. 2:
[7] Տե՛ս նույն տեղում, g. 13, գ. 24, թ. 7, 10:
[8] Տե՛ս նույն տեղում, թ. 26:
[9] Տե՛ս նույն տեղում, g. 8, գ. 14, թ. 10:
[10] Տե՛ս նույն տեղում, g. 16, գ. 173, թ. 2:
[11] Տե՛ս նույն տեղում, գ. 6, թ. 1:
[12] Տե՛ս նույն տեղում, g. 1, գ. 36, թ. 7:
[13] Տե՛ս նույն տեղում, g. 4, գ. 6, թ. 4:

ծավալը կազմում էր 100 հազար ռուբլի, ընդ որում՝ «22 դպրոցական լաբորատորիա (10 կենսաբանության, 8 ֆիզիկայի, 4 քիմիայի), 10 դաշնամուր, 46 կինոապարատ, սպորտային հանդերձանք ու գույք, հեծանիվներ, հեռուստացույցեր, գրենական պիտույքներ, ֆոտոապարատներ, մանկապարտեզի խաղալիքներ, առաջին բուժօգնության արկղիկներ և այլն»[1]: 1977 թ. կեսերին արդեն իրավիճակը Լիբանանում հանդարտվել էր, իսկ հայ համայնքային կյանքը վերականգնվել:

1978 թ. մայիս-հունիսին օգնությունն իրացնելու նպատակով Բեյրութ գործուղվեցին Կոմիտեի Արևելյան երկրների բաժնի վարիչ Ռ. Կոզմոյանը և ավագ խորհրդական Ս. Նադրյանը: Օգնությունը տեղափոխվեց Օդեսայից նավով: Նախապես ճշտվել էին կարիքավորները: Կոմիտեի ներկայացուցիչները եղան լիբանանահայ բոլոր հայաշատ բնակավայրերում: Օգնությունը դպրոցներին բաշխվում էր՝ առանց հաշվի առնելու նրանց «առաջադիմական» կամ դաշնակցական» լինելը: Խորհրդային Հայաստանից ուղարկված օգնությունից բաժին հասավ լիբանանահայ բոլոր աղետյալ խմբերին[2]:

Սակայն 1979 թ. իրավիճակը դարձյալ կտրուկ սրվեց: Բեյրութի ռմբակոծությունների հետևանքով բազմաթիվ հայկական կրթական ու մշակութային օճախներ քանդվեցին: Իրավիճակին ծանոթանալու և օգնության չափը ճշտելու առաքելությամբ Լիբանան մեկնեց Վ. Համազասպյանը: Այնուհետև Փետրվարի 19-ից մինչև մարտի 3-ը խորհրդային օդանավները 23 չվերթով Լիբանան հասցրեցին նախատեսված օգնությունը[3]: Անմիջապես հատուկ օգնությունը բաշխելու նպատակով ստեղծված մարմինը սկսեց այն բաշխելու աշխատանքները[4]: Օգնությունից բաժին հասավ շուրջ 30 հազար հայի[5]:

1979 թ. հունվար ամսին Լիբանանի համայնքի վիճակի, նրա կարիքների և հայրենիքի կողմից ցույց տրվող օգնության ճիշտ կազմակերպման նպատակով Լիբանան է գործուղվել 3 հոգուց կազմված պատվիրակություն՝ Վ. Համազասպյանի գլխավորությամբ: Նույն պատվիրակությունը օգնության նպատակով Լիբանան է մեկնել նաև օգոստոսին[6]: Նախատեսվում էր նաև օգնություն տրամադրել պատերազմից տաժած դպրոցներին, սպորտային ու մշակութային ակումբներին, մամուլին և այլն, նրանց առաքել դասագրքեր, գրականություն, իսկ մամուլի օրգանների համար տպագրական սարքեր, թուղթ և այլն[7]:

Հետաքրքրական է, որ լիբանանահայության ներկայացուցիչները ևս նվիրատվության կարգով Խորհրդային Հայաստանին են փոխանցել տարբեր սարքավորումներ: 1982 թ. Դեմիրջյան եղբայրները նվիրել են արտասահմանյան արտադրության տպող և դրոշմող սարքավորումներ: 1983 թ. Գևորգ Մոմջյանը Հայաստանին է նվիրել 700 հազար դոլար արժողությամբ ժամանակակից սարքավորում[8]:

ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Ուսուցիչների վերապատրաստում: Քանի որ լիբանանահայությունը սփյուռքի ամենամեծաքանակ դպրոցներ ունեցող համայնքներից էր, այնտեղից Խորհրդային Հայաստան վերապատրաստման մեկնող ուսուցիչների թիվն էլ բավականին մեծ էր: Բայց անընդհատ սրվող քաղաքացիական կռիվների պատճառով հաճախ հնարավոր չէր լինում կազմակերպել այդ գործընթացը, որի իրականացման պատասխանատվությունը կրում էր Կոմիտեն: 1965 թ. վերապատրաստման նպատակով Հայաստան հարվիրվեց լիբանանահայ 10 ուսուցիչ[9]: 1967 թ. վերապատրաստման համար Լիբանանից Խոր-

[1] Նույն տեղում, ց. 8, գ. 8, թ. 63:
[2] Տե՛ս նույն տեղում, ց. 9, գ. 15, թ. 15-18:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 20, թ. 4-6:
[4] Տե՛ս նույն տեղում, թ. 6-10:
[5] Տե՛ս նույն տեղում, թ. 2:
[6] Տե՛ս նույն տեղում, ց. 16, գ. 173, թ. 1-2:
[7] Տե՛ս նույն տեղում, ց. 8, գ. 166, թ. 1:
[8] Տե՛ս նույն տեղում, ց. 16, գ. 6, թ. 2-3:
[9] Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 26, թ. 20:

հրդային Հայաստան եկան 8, 1970 թ.՝ 11 (նախատեսված 6-ի փոխարեն), 1971 թ.՝ 13[1], 1972 թ.՝ 14 (նախատեսված 7-ի փոխարեն՝ անհատական խնդրանքներով)[2], 1972 թ.՝ 6, 1975 թ.՝ 1 (նախատեսված 8-ի փոխարեն), 1976 թ.՝ 8, 1977 թ.՝ 7[3], 1978 թ.՝ 7[4], 1979 թ.՝ 12, 1980 թ.՝ 11[5], 1981 թ.՝ 10, 1982 թ.՝ 12 (նախատեսված 10-ի փոխարեն), 1984 թ.՝ 10 և 1985 թ.՝ 12[6] հայ ուսուցիչներ[7]:

ՀԽՍՀ բուհերում լիբանանահայ երիտասարդների ուսման կազմակերպումը: Սփյուռքահայ և մասնավորապես լիբանանահայ երիտասարդության ուսման կազմակերպումը ՀԽՍՀ բուհերում եղել է Կոմիտեի մշտական մտահոգություններից մեկը: Մինչև 1970 թ. ՀԽՍՀ բուհերում ուսանել է 70 լիբանանահայ[8]: Հետաքրքրական է, որ Կոմիտեի ծրագրերում լիբանանահայ ուսանողների հաշվարկը սկսվում է 1968 թվականից: 1968-69 ուստարում լիբանանահայ ուսանողների թիվը խորհրդահայ բուհերում և տեխնիկումներում 100 էր[9]: 1978-79 ուստարում նրանց թիվը 17 էր (որից ինժեներություն էր սովորում 4, բժշկություն՝ 4, մշակույթ՝ 1, մանկավարժություն՝ 1 ուսանող[10]): Մինչև 1980 թ. Լիբանանից ՀԽՍՀ բուհերում սովորող հայ ուսանողների թիվը համեմատաբար փոքր էր՝ 1970 թ.՝ 15, 1971 թ.՝ 14, 1976 թ.՝ 17 և 1978 թ.՝ 12[11]: 1980 թ. իրավիճակը փոխվեց: Այդ տարի խորհրդահայ բուհեր ընդունվեցին լիբանանահայ 40 երիտասարդներ: Հետագա մի քանի տարիներին այդ բարձր ցուցանիշը պահպանվեց. 1981 թ. ՀԽՍՀ բուհեր ընդունվեցին լիբանանահայ 40, 1982 թ.՝ 39, 1985 թ.՝ 38 (2-ը ասպիրանտ) երիտասարդներ[12]:

Ընդհանուր առմամբ 1958-1980 թթ. ՀԽՍՀ բուհերում սովորել է 227 լիբանանահայ երիտասարդ: Դա երկրորդ ցուցանիշն էր սիրիահայ երիտասարդներից հետո[13]:

Երեխաների հանգստի կազմակերպումը ՀԽՍՀ ճամբարներում: Հատկապես տպավորիչ էին ՀԽՍՀ-ում հանգստ անցկացնող լիբանանահայ երեխաների թվերը: Այսպես՝ 1970 թ. ՀԽՍՀ-ում հանգստացել են լիբանանահայ 27 (նախատեսված 20-ի փոխարեն), 1976 թ.՝ 15, 1977 թ.՝ 15[14] (թեև նախատեսված չէր[15]), 1978 թ.՝ 35[16], 1980 թ.՝ 90[17], 1981 թ.՝ 90 (նախատեսված 80-ի փոխարեն), 1982 թ.՝ 80, 1983 թ.՝ 108 և 1984 թ.՝ 70 երեխաներ: 1985 թ. արդեն Լիբանանից դպրոցականներ չեն այցելել, թեև նախատեսված էր 70 երեխաների հանգիստ ՀԽՍՀ-ում[18]:

Հետաքրքրություն են ներկայացնում նաև հայրենիքում լիբանանահայ երեխաների հանգստի կազմակերպման պայմանները: Օրինակ 1976 թ. Կոմիտեն հաշվի առնելով լիբանանահայ երեխաների ծանր վիճակը՝ Լիբանանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյին գրում էր, որ այդ տարի նախատեսվում էր Լիբանանից հայրենիք տանել 8-14 տարեկան 5 երեխա, որոնց ժամանելու ծախսը պետք է հոգային նրանց ընտանիքները, իսկ հայրենիքում բոլոր ծախսերը և վերադարձի ծախսը՝ Կոմիտեն[19]:

---

[1] Տե՛ս նույն տեղում, g. 16, գ. 3, թ. 3:
[2] Տե՛ս նույն տեղում, g. 5, գ. 12, թ. 39-40:
[3] Տե՛ս նույն տեղում, g. 8, գ. 7, թ. 16:
[4] Տե՛ս նույն տեղում, գ. 31, թ. 33:
[5] Տե՛ս նույն տեղում, g. 5, գ. 26, թ. 86:
[6] Տե՛ս նույն տեղում, g. 16, գ. 192, թ. 47:
[7] 1983 թ. վերաբերյալ տվյալներ գտնել չհաջողվեց:
[8] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, g. 6, գ. 1, թ. 1-5:
[9] Տե՛ս նույն տեղում, g. 3, գ. 10, թ. 5:
[10] Տե՛ս նույն տեղում, g. 8, գ. 31, թ. 13:
[11] Մյուս թվականների մասին տվյալներ գտնել չհաջողվեց:
[12] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, g. 16, գ. 192, թ. 92:
[13] Տե՛ս Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Ե., 1985, էջ 428: Տե՛ս նաև «Սովետական Հայաստան», 1980, թիվ 12, էջ 22-23:
[14] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, g. 8, գ. 14, թ. 10:
[15] Տե՛ս նույն տեղում, գ. 7, թ. 16:
[16] Տե՛ս նույն տեղում, գ. 31, թ. 34:
[17] Տե՛ս նույն տեղում, g. 9, գ. 26, թ. 85:
[18] Տե՛ս նույն տեղում, g. 16, գ. 192, թ. 16:
[19] Տե՛ս նույն տեղում, g. 8, գ. 146, թ. 14:

Հայրենադարձությունը: Կոմիտեի գործունեության շրջանում ոչ առանց նրա աջակցության ՀԽՍՀ է ներգաղթել 6795 ընտանիք (31920 մարդ)[1]: Կապված հիմնականում անբարենպաստ իրավիճակի հետ, ինչպես նաև հաշվի առնելով տարաբնույթ այլ հարցեր (համայնքի կազմակերպական առանձնահատկությունները, պետության հարուցած դժվարությունները և այլն) Լիբանանից ներգաղթողների մեծ հոսք չեղավ: 1962-1982 թթ. Լիբանանից ՀԽՍՀ է ներգաղթել ընդամենը 113 ընտանիք (378 մարդ), որը վեցերորդ ցուցանիշն էր[2]:

Փաստորեն Կոմիտեի համագործակցությունը լիբանանահայության և մասնավորապես նրա կազմակերպությունների հետ խորը և բազմակողմանի էր: Հատկապես հաշվի առնելով Լիբանանում տիրող բարդ ներքաղաքական պայմանները՝ Կոմիտեն ոչ միայն համագործակցել է լիբանանահայության հետ, այլ հայության այդ վտանգված հատվածին հատկացրել մեծածավալ օգնություն:

Мелик Овсепян, Сотрудничество Комитета по культурным связям с армянами диаспоры с Армянской общиной Ливана. Комитет по культурным связям с армянами диаспоры с первых дней своей работы с армянами Ливана столкнулся с проблемами, которые по сути предрешили направление сотрудничества.

Исходя из сложного внутриполитического состояния в Ливане Комитет пытался всячески помогать общине. Комитет организовал объёмную гуманитарную помощь организациям Армянской общины Ливана. И хотя первоначально помощь предназначалась только для так называемых патриотических организаций, но в конце концов помощь получили и остальные организации.

В течении двух десятилетий Комитет содействовал учебе ливанской армянской молодежи в вузах Советской Армении, организовал отдых детей в лагерях и участие учителей на ежегодных курсах обучения.

Ключевые слова: Комитет, армяне диаспоры, армянская община Ливана, помощь, контакты, визиты, учеба, отдых, лечение, партнер.

Melik Hovsepyan, Cooperation of the Committee of Cultural Relations with the Diaspora Armenians with the Armenian community of Lebanon. The Committee on Cultural Relations with the Diaspora Armenians from the first days of its works with the Armenians of Lebanon faced problems that essentially predetermined the direction of cooperation.

Based on the complex internal political situation in Lebanon, the Committee tried to help the community in every way. The Committee organized extensive humanitarian assistance to organizations of the Armenian community of Lebanon. Although initially the assistance was intended only for the so-called patriotic organizations, in the end, the rest of the organizations also received assistance.

For two decades, the Committee assisted Lebanese Armenian youth in universities of Soviet Armenia, organized recreation for children in camps and the participation of teachers in annual training courses.

Key words: Committee, Diaspora Armenians, Armenian community of Lebanon, assistance, contacts, visits, studies, recreation, treatment, partner.

---

[1] Տե՛ս Մելիքսեթյան Հ., նշվ. աշխ., էջ 299:
[2] Տե՛ս նույն տեղում: